# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 82 - 83 (16380) ՇԱԲԱԹ, 7 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


## ՈՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ՝ ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՅԱՑԱՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



*Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 30-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:*

Հանդիպմանը երկու երկրների ղեկավարները քննարկեցին բարձր մակարդակի վրաց-հայկական հարաբերությունների օրակարգը, նախանշեցին այն առաջ մղելու նոր հեռանկարները, անդրադարձան քաղաքական, տնտեսական, հումանիտար եւ այլ ոլորտներում փոխգործակցության զարգացմանն ուղղված ընթացիկ ծրագրերին: Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սերժ Սարգսյանը երկկողմ ու բազմակողմ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԱՏՈՒԿ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Հայաստանի նախագահի Թբիլիսի կատարած աշխատանքային այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Սերժ Սարգսյանի հանդիպումը:*



Հանդիպմանը կողմերը գոհունակությամբ արձանագրեցին, որ ավանդական բարիդրացիության, երկու երկրների բարեկամ ժողովուրդների միջեւ պատմական հենքի վրա խարսխված միջպետական շփումները, այդ թվում՝ Վրաստանի եւ Հայաստանի կառավարությունների արդյունավետ փոխգործակցությունը լուրջ նախադրյալներ են ստեղծում գործընկերության նորանոր ուղղություններ նախանշելու համար:

Իրակլի Ղարիբաշվիլին եւ Սերժ Սարգսյանը երկուստեք կարեւորեցին տարածաշրջանային նշանակության ենթակառուցվածքային, այդ թվում՝ էներգետիկ ծրագրերի իրականացումը, որոնք, նրանց համոզմամբ, զգալիորեն կխթանեն Վրաստանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական կապերի ամրապնդումը, կնպաստեն առեւտրաշրջանառության ծավալների աճին:

Անդրադառնալով ինտեգրացիոն գործընթացներին երկու երկրների մասնակցությանը՝ Վրաստանի վարչապետը եւ Հայաստանի նախագահը մատնանշեցին դրանց փոխլրացնող բնույթը եւ ենթակառուցվածքային ծրագրերի փոխկապակցման կարեւորությունը:

## «ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՄԵԾ ՋԱՏԱԳՈՎ Է»

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

*Թբիլիսիում կայացավ աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հանդիպումը:*

Հանդիպմանը երկուստեք կարեւորվեց վերջին տարիներին պարբերական բնույթ ստացած բարձրաստիճան հանդիպումները, որոնք, Վրաստանի խորհրդարանի նախագահի եւ Հայաստանի նախագահի համոզմամբ, նոր շունչ են հաղորդում երկկողմ հարաբերություններին՝ հնարավորություն տալով քննարկել վրաց-հայկական համակողմանի օրակարգի արդիական հարցերը:

Վրաստանի խորհրդարանի նախագահը կարեւորեց Հայաստանի նախագահի այցը՝ ընդգծելով, որ Սերժ Սարգսյանին Վրաստանում մեծապես հարգում եւ ընդունում են՝ ոչ միայն որպես Հայաստանի նախագահի, այլ նաեւ որպես Վրաստանի ու Հայաստանի միջեւ բարեկամության ամրապնդման մեծ ջատագով: Դավիթ Ուսուփաշվիլին հույս հայտնեց, որ Սերժ Սարգսյանի այցը եւս մեկ առաջընթաց քայլ կդառնա երկու երկրների բարեկամության ամրապնդման գործում:

Իր հերթին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդգծեց խորհրդարանականների դերը պատմական ամուր հիմքի վրա կառուցված հայ-վրացական եղբայրական եւ բարիդրացիական հարաբերությունների ամրապնդման գործում՝ նշելով, որ միջպետական հարաբերությունների օրակարգում միջխորհրդարանական կապերը վաղուց իրենց հաստատուն տեղն ունեն, ինչի մասին է վկայում երկու երկրների խորհրդարաններում համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովների առկայությունը:

Զրուցակիցները համակարծիք էին, որ Վրաստանի եւ Հայաստանի զարգացումը, երկու բարեկամ ժողովուրդների բարեկեցությունը մեծապես պայմանավորված են վրաց-հայկական սերտ համագործակցությամբ եւ հարաբերությունների ամրապնդմամբ: Սերժ Սարգսյանն ու Դավիթ Ուսուփաշվիլին կարեւորեցին բոլոր ոլորտներում՝

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԳԱՐԵԳԻՆ Բ. «ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՊԻՏԻ ՀԱՂՈՐԴԻ ԵՎ Է'Լ ԱՎԵԼԻ ԱՄՐԱՑՆԻ ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ »

### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱՄԲ ՎԵՐԱՕԾՎԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ

*Հոկտեմբերի 31-ին, հանդիսապետությամբ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի ու ներկայությամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի, կատարվեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությունը:*



Ներկա էին Հայաստանի պաշտոնական պատվիրակության անդամները, որի կազմում էին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, Հայաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը, Հայաստանի ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Այստեղ էին նաեւ Վրաստանի մշակույթի նախարար Միխեիլ Գիորգաձեն, փախստականների եւ բռնագաղթվածների հարցերով նախարար Սոզար Սուբարին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին, կրոնական հարցերի գործակալության պետ Զազա Վաշակմաձեն, Վրաստանի խորհրդարանի անդամներ Հենզել Մկոյանը, Սամվել Պետրոսյանը, Ռուսլան Պողոսյանը, Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Էդուարդ Աղասարյանը, Համլետ Մովսիսյանը, Գագիկ Կարսլյանն ու Սմբատ Կյուրեղյանը, աշխահառչակ օպերային երգիչ Պաատա Բուրճուլաձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, բանաստեղծ, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող Կարինե Մանուկյանը, Վրաստանում գործող հայկական ստեղծագործական եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հավատացյալներ:

Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությանը ներկա էին նաեւ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒՆ



*Թբիլիսիի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը հայկական եկեղեցու վերականգնման-վերանորոգման գործում ներդրած բացառիկ ավանդի համար Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բարձրագույն պարգեւով՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» մեդալով պարգեւատրեց Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն:*

Հիշեցնենք, որ հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման համաֆինանսավորողներից մեկը Բիձինա Իվա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

***Նոյեմբերի 5-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:***



Այցի շրջանակներում, Ադրբեջանի ղեկավարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու, ինչպես նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Երկու երկրների նախագահների առանձնազրույցից հետո, վրաց-ադրբեջանական բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:

Հանդիպման արդյունքում ստորագրվեց փաստաթուղթ, որը միտված է երկկողմ գործակցության ակտիվացմանը:

«Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ համագործակցության խորացման մասին հռչակագիրը» «երկու երկրների գործընկերության ընդլայնում է նախատեսում քաղաքականության, անվտանգության, առեւտրի, էկոնոմիկայի, տարանցման, մշակույթի, գիտության եւ կրթության ոլորտներում»:

Այցի ավարտին, Ադրբեջանի նախագահը հանդիպում ունեցավ Մառնեուլիի շրջանում բնակվող ադրբեջանցիների հետ եւ եղավ տեղի սառնարանային տնտեսությունում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԴԱՇՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ»



***Վրաստանի կառավարությունը պատրաստ է քննարկել երկրի դաշնային կառուցվածքի մոդելը, որի շրջանակներում, Աբխազիային կտրամադրվի հատուկ կարգավիճակ: Այդ մասին Վրաստան-Եվրամիություն ասոցիացիայի կոմիտեի երկրորդ նստաշրջանում հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին:***

«Մենք ցանկանում ենք Աբխազիայի եւ Ցխինվալիի բռնազավթված տարածաշրջանի բնակչությանն առաջարկել նրանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքների պաշտպանություն, որոնք նախատեսված են երկրի սահմանադրությամբ: Վրաստանը պատրաստ է քննարկել, օրինակ, թե ինչպիսին պետք է լինի Վրաստանի դաշնային կառուցվածքը, որտեղ Աբխազիան կունենա հատուկ կարգավիճակ: Դրա վրա մենք քիչ չենք աշխատել, նույնիսկ՝ մեր ընդդիմախոսների հետ միասին: Այնպես որ, մենք պատրաստ ենք աշխատել այդ ուղղությամբ»,- հայտարարեց նա եւ հավելեց, որ Վրաստանի դաշնային կառույցի հարցում նշանակալից են եվրոպական չափորոշիչներն ու մոտեցումները:

Իր խոսքում պետնախարարը նաեւ նշեց, որ Ռուսաստանը մասնակիորեն ետ է կանգնում իր իսկ առաջին դեմքերի կողմից բազմիցս հրապարակած դիրքորոշումից, ըստ որի, ողջունում է վրաց-աբխազական եւ վրաց-օսեթական հարաբերությունների հաստատումը: «Իրականում նման քայլերի կատարմանը մենք ընդհարվում ենք շրջափակման հետ»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին եւ հավելեց, որ ռուսական կողմը խոչընդոտներ է հարուցում ոչ կառավարական կազմակերպությունների, քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչներին բռնազավթած տարածքների այսպես կոչված տեղական իշխանության հետ կապերի հաստատմանը: «Եվրոպական արժեքներին ուղղված Վրաստանի քայլերը Ռուսաստանի կողմից նոր արձագանք առաջացրին: Դա վերաբերում է ոչ միայն ապօրինի պայմանագրերի կնքմանը, այլեւ փշալարերի անցկացմանը, ինչը հստակորեն ցույց է տալիս, որ Ռուսաստանը անհանգստացած է վրաց-աբխազական եւ վրաց-օսեթական հասարակությունների մերձեցման միտմամբ: Դա ակնհայտ է: Մենք այդ ուղղությամբ կարողացանք լուրջ քայլեր կատարել»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

# ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

***Վրաստանի փոխվարչպետ, արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, ԱՄՆ կատարած աշխատանքային այցի շրջանակներում, ելույթ ունեցավ ԱՄՆ-ի կոնգրեսի՝ Վրաստանի հետ բարեկամության խմբի շնորհանդեսին:***



Նախարարը խոսեց երկրում իրականացվող բարեփոխումների, արտաքին քաղաքական առաջնահերթությունների, մասնավորապես, Եվրոպական եւ Եվրատլանտյան մտումների, Ռուսաստանի ագրեսիվ գործողությունների, տարածաշրջանային անվտանգության, Վրաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության եւ ԱՄՆ-ի հետ առեւտրա-տնտեսական կապերի խորացման մասին:

«Մեր երկրում ժողովրդավարական փոփոխություններն է՛լ ավելի խորացրին Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական համագործակցությունը, ինչը ողջ աշխարհին հստակորեն ցույց տվեց, որ Վրաստանը միջազգային ընկերակցության արժանավոր ներկայացուցիչ է, եւ այն իրականում արժանի է, որ դառնա Հյուսիսատլանտյան պայմանագրի եւ Եվրամիության անդամ: Եվրատլանտյան կառույցներին ինտեգրումը Վրաստանի արտաքին քաղաքական կարեւորագույն նպատակն է, եւ դրա իրականացման ճանապարհին մենք մեծ հույսեր ենք կապում մեր ամերիկյան գործընկերների հետ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ներկայացուցիչները պաշտպանել են ՆԱՏՕ-ին Վրաստանի հնարավոր անդամակցությունը, բայց չեն մեկնաբանել Ուկրաինային տված համանման խոստումները:

«Մենք պաշտպանում ենք Բուխարեստում ստանձնած այն պարտավորությունը, որ Վրաստանը դառնա ՆԱՏՕ-ի անդամ, եւ շարունակում ենք հաստատակամորեն աջակցել այդ ուղղությամբ նրա հույսերին»,- հայտարարեց պետքարտուղարի առաջին տեղակալ Թոնի Բլինկենը Վրաստանի արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլու հետ կայացած հանդիպմանը:

ՆԱՏՕ-ի երկրները 2008 թվականին Բուխարեստի գագաթաժողովում պարտավորվել են, որ Վրաստանը եւ Ուկրաինան ապագայում կընդունվեն Հյուսիսատլանտյան դաշինք: Ընդսմին, Բլինկենն Ուկրաինան չի հիշատակել:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

# ԷԼԻՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Վրաստանում Հայաստանի դեսպանությունը համալրվեց նոր դիվանագետով: Էլինա Մկրտչյանը նշանակվել է դեսպանության երկրորդ քարտուղար եւ կզբաղվի մշակույթի եւ հումանիտար հարցերով:

Էլինա Մկրտչյանը երեւանցի է: Դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել եւ 2002 թվականին ավարտել է Երեւանի հումանիտար ինստիտուտի ճապոներենի բաժինը:

2000-2001 թվականներին մասնակցել է Ճապոնիայի արտաքին գործերի նախարարության երիտասարդ դիվանագետների դասընթացներին:

2009 թվականին մասնակցել է Նիդերլանդների միջազգային հարաբերությունների ինստիտուտի կողմից կազմակերպված Արեւելյան Եվրոպայի կրտսեր դիվանագետների դասընթացին:

2001-2002 թվականներին՝ որպես կցորդ, աշխատել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության Ասիայի, Օվկիանիայի եւ Աֆրիկայի վարչության Արեւելյան Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան երկրների բաժնում:

2005-2009 թվականներին զբաղեցնում էր Հայաստանի ԱԳ նախարարության Մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչություն լրատվամիջոցների հետ կապի բաժնում: Իսկ մինչեւ Թբիլիսի գալը՝ որպես երկրորդ քարտուղար, աշխատում էր Հայաստանի արտաքին գործերի նախարարության Ասիայի, Օվկիանիայի եւ Աֆրիկայի վարչության Արեւելյան Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան երկրների բաժնում:

Տիրապետում է ռուսերենին, անգլերենին եւ ճապոներենին:



### ԱԴՐԲԵՋԱՆ
## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

*Նոյեմբերի 1-ին Ադրբեջանում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որոնց արդյունքներով, Ադրբեջանի իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը խորհրդարանում կզբաղեցնի 125 պատգամավորական տեղերից նվազագույնը 70-ը:*

*Ադրբեջանի ընդդիմադիր եւ դեմոկրատական ուժերի «Ազգային խորհուրդ» միավորումը, որը ներառում է տասնյակ առաջատար ընդդիմադիր կուսակցություններ ու հասարակական կազակերպություններ, հայտարարել է, որ երկրում նոյեմբերի 1-ին անցկացված խորհրդարանական ընտրությունները լեգիտիմ չեն: Դա Ադրբեջանի պատմության մեջ ամենախայտառակ ընտրություններն են, եւ որ իրենք չեն ճանաչում այդ ընտրությունների արդյունքները:*

### ԹՈՒՐՔԻԱ
## ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թուրքիայի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ձայների գերակշիռ մեծամասնությունը՝ 49,41 տոկոսը, ստացել է վարչապետ Ահմեդ Դավութօղլուի գլխավորած «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ): Ընդդիմադիր քեմալական Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) ստացել է ձայների 25,38 տոկոսը (134 պատգամավոր), «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ)՝ 11,93 տոկոսը (41 պատգամավոր) եւ քրդամետ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը (ԺԴԿ)՝ 10,70 տոկոսը (59 պատգամավոր):*

*Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 26-րդ գումարման նստաշրջանում ներկայացված կլինի 3 հայ պատգամավոր՝ երկրի առաջատար կուսակցություններից, երկուսը իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունից, եւս մեկը՝ քեմալականից:*

### ԵԳԻՊՏՈՍ
## ԱՎԻԱՎԹԱՐԻ ԶՈՀ Է ԴԱՐՁԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻ 224 ՄԱՐԴ

*«Կոգալիմավիա» ռուսական ավիաընկերության A321 ինքնաթիռը, որը կատարում էր Շարմ էլ Շեյխ-Սանկտ Պետերբուրգ չվերթը, աղետի է ենթարկվել հոկտեմբերի 31-ին, թռիչքից մոտավորապես կես ժամ անց, Հյուսիսային Սինայի մարզի Էլ Հասնա բնակավայրի մերձակայքում: Ինքնաթիռում եղել է 217 ուղեւոր եւ անձնակազմի յոթ անդամ: Նրանցից ոչ ոք չի փրկվել: «Կոգալիմավիա» ավիաընկերությունում այն կարծիքին են, որ A321 ինքնաթիռի կործանման պատճառ է դարձել արտաքին ներգործությունը:*

*Սանկտ Պետերբուրգի իշխանությունները Եգիպտոսում տեղի ունեցած ավիավթարից զոհվածների ընտանիքներին մեկական միլիոն ռուբլու չափով նյութական օգնություն կվճարեն յուրաքանչյուր զոհվածի համար:*

### ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՈՒԴԱՆ
## ԵՎՍ ՄԵԿ ԱՎԻԱՎԹԱՐ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Նոյեմբերի 4-ին Հարավային Սուդանում ավիավթարի է ենթարկվել AN12 բեռնատար ինքնաթիռը: Այն ընկել է օդանավակայանից 800 մետր հեռավորության վրա: Օդանավում եղել է շուրջ քսան մարդ, այդ թվում՝ 10-ից մինչեւ 15 ուղեւորներ եւ անձնակազմի հինգ անդամներ: Թե քանի մարդ է զոհվել գետնի վրա բեռնատար ինքնաթիռի կործանման հետեւանքով, չի հաղորդվում:*

*Հայաստանի ԱԳ նախարարության ֆեյսբուքյան էջում հրապարակվել է Հարավային Սուդանում կործանված AN12 բեռնատար ինքնաթիռի զոհված անձնակազմի անունները. հրամանատար Գեւորգ Թովմասյան, երկրորդ օդաչու Սամվել Համբարձումյան, բորտ-ինժեներ Սամվել Մկրտչյան, ավիատեխնիկ Արմեն Անտոնյան, ավիատեխնիկ Սուրեն Պետրոսյան:*

*Նշենք, որ 2014թ.-ից AN12 օդանավը հանվել է Հայաստանի գրանցումից: Պատկանում էր Asia Airways տաջիկական ընկերությանը:*

Ծաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԵԱՀԿ

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ




***Աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող ԵԱՀԿ-ի մշտական ներկայացուցիչները, Վրաստանի ղեկավարության հետ հանդիպումներում, քննարկեցին վրաց-ռուսական փոխհարաբերությունների հարցերը, երկրի տարածքային ամբողջականության խնդիրը:***

ԵԱՀԿ-ում ԱՄՆ-ի, Կանադայի, Լիտվայի, Ռումինիայի եւ Շվեդիայի մշտական ներկայացուցիչները նաեւ ծանոթացան երկրում իրականացվող բարեփոխումներին:

Դիվանագետներն հանդիպումներ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, արտաքին գործերի փոխնախարար Դավիթ Դոդուայի եւ Վրաստանի վարչապետի՝ ՌԴ-ի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեի հետ:

Հանդիպումներում անդրադարձ է կատարվել Ռուսաստանի հետ հարաբերություններում Վրաստանի կառավարության պրագմատիկ, կառուցողական քաղաքականությանը, ինչպես նաեւ այն առաջընթացին, որն այդ քաղաքականության շնորհիվ ձեռք է բերվել առեւտրատնտեսական, հումանիտար եւ մշակութային բնագավառներում:

ԵԱՀԿ-ի մշտական ներկայացուցիչների այցն ավարտվեց նոյեմբերի 4-ին: Նշենք, որ սա ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների խմբի առաջին այցն է 2008 թվականի հուլիսից ի վեր:

ԿՐԹԱԿԱՆ

# ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊՐՈՖԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանկիձեն Բեռլինում, պրոֆկրթության բարեփոխման ծրագրի շրջանակներում, հանդիպում ունեցավ Գերմանիայի տնտեսական համագործակցության դաշնային նախարարության պետական քարտուղար Ֆրեդերիկ Քիղշեի եւ Գերմանիայի միջազգային համագործակցության ու պրոֆկրթության նախագծի ղեկավար Հանելոր Քրեսի հետ:***

Հանդիպմանը, որին մասնակցեցին նաեւ Վրաստանի կրթության փոխնախարար Քեթեւան Նատրիաշվիլին ու Գերմանիայում Վրաստանի դեսպան Լադո Ճանտուրիան, կողմերը քննակեցին պրոֆկրթութան աջակցության եւ զարգացման նախագիծը:

Ինչպես նշեց Թամար Սանիկիձեն, անցկացված հանդիպումներն ավելի քան արդյունավետ էին, քանի որ առաջիկա համագործակցության շրջանակներում գերմանական կողմը պատրաստակամություն է հայտնել՝ աջակցելու Վրաստանում դուալային պրոֆկրթության պիլոտային նախագծի ներդրմանը, նպաստել այդ հարցում ուսուցիչների որակավորման բարձրացմանն ու վերապատրաստմանը:

ՏԱՐԱԴՐԱՄ

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԴՐԱՄԻ՝ ԼԱՐԻԻ ՆՈՐԱՑՎԱԾ ԴԻԶԱՅՆԸ

***Վրաստանի ազգային արժույթի՝ լարիի նորացված թղթադրամները հանրապետության Ազգային բանկը շրջանառության մեջ կդնի 2016 թվականից:***



Այդ մասին հայտարարել է բանկի նախագահ Գիորգի Քադագիձեն: 20, 50 եւ 100 անվանական արժեքով նորացված թղթադրամները կթողարկվեն փուլ առ փուլ եւ շրջանառության մեջ կլինեն նախորդ էմիսիաների թղթադրամների հետ մեկտեղ:

«Սա թղթադրամների դիզայնի առաջին զգալի նորացումն է 20-ամյա պատմության ընթացքում»,- հայտարարեց Ազգային բանկի նախագահը:

Նոր թղթադրամները հանդերձված են պաշտպանական նշաններով, որոնք ստացվել են արդի ու բարձր տեխնոլոգիական գործընթացի շնորհիվ, եւ միեւնույն ժամանակ հեշտությամբ նկատելի են սպառողին: Անվանական արժեքի ճանաչման նպատակով, նշաններ են արվել նաեւ թույլ տեսողությամբ անձանց համար: Նորացված թղթադրամները պատրաստվել են այնպիսի նյութերի եւ պաշտպանիչ մեխանիզմների օգտագործմամբ, որոնք մեծացնում են դրանց կայունությունը կեղտոտման եւ բնական մաշվման նկատմամբ:

5 եւ 10 լարի անվանական արժեքով թղթադրամները կնորացվեն ավելի ուշ:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՍԿՍՎԵՑ ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ




***Ինչպես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, Վրաստանի նախկին նախագահ, Ուկրաինայի մարզի ներկայիս նահանգապետ Միխեիլ Սաակաշվիլին կզրկվի Վրաստանի քաղաքացիությունից:***

Նախարարի խոսքերով, նման որոշումը հիմնավորված է նրանով, որ Միխեիլ Սաակաշվիլին ընդունել է Ուկրաինայի քաղաքացիություն:

«Վրաստանի սահմանադրության համաձայն, Վրաստանի քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ երկրի քաղաքացի: Օրենքի համաձայն, երբ Վրաստանի քաղաքացին ստանում է այլ երկրի քաղաքացիություն, ապա այն դառնում է Վրաստանի քաղաքացիությունից զրկվելու հիմնավորում:

Օրերս ստացվեց ուկրաիներենով պաշտոնական նոտա, որի համաձայն, Միխեիլ Սաակաշվիլին ստացել է Ուկրաինայի քաղաքացիություն: Սույն նոտայի հիման վրա, որը ուկրաինական պետության պաշտոնական փաստաթուղթն է, Վրաստանի օրենսդրության եւ Վրաստանի կողմից ստանձնած միջազգային պարավորությունների համաձայն, մենք սկսում ենք Միխեիլ Սաակաշվիլու՝ Վրաստանի քաղաքացիության դադարեցման ընթացակարգը: Այդ մասին շահագրգիռ անձը Օդեսայում գրավոր կտեղեկացվի, ու նրան կտրվի բանական ժամանակահատված դիրքորոշման հստակեցման համար»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

# «ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ը ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՆԱԽԿԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ

***Թբիլիսիի քաղաքային դատարանը «Ռուսթավի 2» հեռուստաընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը վերադարձրեց նախկին սեփականատիրոջը՝ Քիբար Խալվաշիին: Այդ մասին նոյեմբերի 3-ին հայտարարեց դատավոր Թամազ Ուրթմելիձեն:***

Դատարանը ապօրինի է ճանաչել Դարամանիշվիլի եղբայրների կողմից հեռուստաընկերության բաժնետոմսերի 91 տոկոսի հանձնման գործարքը: Դաարանի որոշմամբ հանրային ռեեստրում իրականացվելու է համապատասխան փոփոխությունը:

Նշենք, որ Թբիլիսիի քաղաքային դատարանի սույն որոշումը անմիջապես իրականացնել հնարավոր չէ, քանի որ նախօրեին երկրի Սահմանադրական դատարանը իր որոշմամբ վերացրեց գույքի անմիջականորեն հանձնման վերաբերյալ օրենքում ժամանակավորապես կատարած համապատասխան փոփոխությունը:

Հեռուստաընկերության փաստաբանները հայտարարեցին, որ իրենք մտադիր են վերադաս ատյաններում բողոքարկել քաղաքային դատարանի վերոնշյալ որոշումը:

Ավելացնենք, որ Թբիլիսիի քաղաքային դատարանը, նոյեմբերի 5-ի իր որոշմամբ, «Ռուսթավի 2» հեռուստաընկերության ժամանակավոր կառավարիչ է նշանակել «Իմեդի» հեռուստաընկերության փոխտնօրեն Ռեւազ Սաղեւարիշվիլուն եւ «Ռուսթավի 2»-ի բաժնետոմսերի նախկին սեփականատեր Դավիթ Դվալիին: Ընդ որում, դատարանի որոշմամբ, սույն որոշումը պարտադիր է իրականացման համար նոյեմբերի 5-ից:




Ինչ վերաբերում է անմիջականորեն «Ռուսթավի 2» հեռուստաընկերությանը, ապա դրա, արդեն դատարանի կողմից պաշտոնաթող եղած գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիան հատարարեց, որ ինքը ընկերության շենքից հեռանալու մտադրություն չունի: Հեռուստաընկերության լրագրողները աշխատում են արտակարգ իրավիճակում:



## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԵՐՁԲԱԼԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Էստոնիայում եւ Լիտվայում:*

*Այցի շրջանակներում, Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպումներ ունեցավ Էստոնիայի նախագահ Հենդրիկ Իլվեսի, վարչապետ Տաավի Ռիվասի, խորհրդարանի նախագահ Էյկի Նեստորի, պաշտոնական այլ անձանց հետ:*

*Վիլնյուսում Վրաստանի կառավարության ղեկավարը բանակցություններ վարեց Լիտվայի նախագահ Դալե Գրիբաուսկայտեի, վարչապետ Ալգրիդաս Բուտկյավիչուսի, խորհրդարանի նախագահ Լրետա Գրաուժնիեի հետ:*

*Հանդիպումներում քննակվեցին Վրաստան-Եվրամիություն Ասոցիացման համաձայնագրով նախատեսված գործընթացների կատարման, երկկողմ եւ բազմակողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Առանձնակի ուշադրություն հատկացվեց տնտեսական համագործակցության թեմային:*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ՝ 2,7 ՏՈԿՈՍ

*2015 թվականի անցած ինը ամիսների ընթացքում, Վրաստանի տնտեսական միջին աճը կազմել է 2,7 տոկոս: Վիճակագրական ծառայության տվյալներով, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, ընթացիկ տարվա սեպտեմբերին ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 2,2 տոկոս, երրորդ եռամսյակում՝ 2,5, իսկ 9 ամսվա հաշվով՝ 2,7 տոկոս:*

## ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Վրաստանի խորհրդարանի երկու՝ Սագարեջոյի եւ Մարտվիլիի ընտրատարածքներում, անցկացվեցին միջանկյալ խորհրդարանական ընտրություններ:*

*Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով, երկու ընտրատարածքներում էլ քվերի մեծամանությամբ հաղթեցին կառավարող «Վրացական երազանք» կոալիցիայի ներկայացուցիչ, հանրապետական կոալիցիայի անդամ Թամար Խիդաշելին (Սագարեջոյի ընտրատարածք) եւ «Վրացական երազանք» կուսակցության անդամ Սոսո Դանելիան (Մարտվիլիի ընտրատարածք):*

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ 120 ԲԺԻՇԿ

*Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոյի հայտարարությամբ, վերջին մեկուկես տարվա ընթացքում Վրաստանում հիվանդների մահվան կապակցությամբ, պատասխանատվության է ենթարկվել 120 բժիշկ:*

*Նշենք, որ 2014 թվականին մեկից մինչեւ վեցամսյա ժամկետով, կախված պատասխանատվության աստիճանից, 40 բժիշկների հավաստագրման գործողության ժամկետը կանգնեցվել է, իսկ 65 բժիշկների տրվել է գրավոր նկատողություն: 2015 թվականին 8 բժիշկ ստացել է գրավոր նկատողություն, իսկ 7 բժշկի հավաստագրման ժամկետը դադարեցվել է տարբեր ժամանակներով:*

*Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության պաշտոնական տվյալներով, 2014 թվականին երկրում ծննդաբերության ժամանակ մահացել է 30 կին, 919 նորածին մահացած է ծնվել: Վերջին մեկուկես տարվա ընթացքում վախճանվել է մինչեւ մեկ տարեկան 812 երեխա:*

*2013 թվականին մահացել է մեկից մինչեւ հինգ տարեկան 169, 2014-ին՝ 69, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակում՝ 28 երեխա:*

# ԳԱՐԵԳԻՆ Բ. «ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՇՈՒՆՉ ՊԻՏԻ ՀԱՂՈՐԴԻ ԵՎ Է'Լ ԱՎԵԼԻ ԱՄՐԱՑՆԻ ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ »

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նիայի եւ այլ երկրների արտակարգ եւ լիազոր դեսպանները:

13-րդ դարում կառուցված Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգնման աշխատանքներն սկսվել էին 2012 թ.-ից`



Վիրահայոց թեմի եւ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի համատեղ ջանքերով:

Եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց կաթողիկոսին դիմավորեցին Վիրահայոց թեմի հոգեւորականաց դասը` գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, եկեղեցու բարերարներն ու բազում ուխտավորներ:

Արարողության ընթացքում, սուրբ գրային ընթեցումներից եւ աղոթքներից հետո, Վիրահայոց թեմի սպասավորները շարականների ու սաղմոսների ներքո ջրով ու գինով լվացին եկեղեցու Սուրբ Սեղանը, խորանի սյուները եւ մկրտության ավազանը: Ապա խորան բարձրացվեց Սրբալույս Մյուռոնը, որով Ամենայն Հայոց կաթողիկոսը կատարեց եկեղեցու Սուրբ Սեղանի վերաօծումը:

Ձեռամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի, Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, Մայր Աթոռի դիվանապետ Տեր Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, Մայր Աթոռի լուսարարապետ Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանի եւ Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տեր Վարդան եպիսկոպոս Նավասարդյանի, օծվեցին եկեղեցու խորանի սյուները, մկրտության ավազանն ու խորանի շուրթը:

Հավարտ եկեղեցու օծման կարգի, Ամենայն Հայոց Հայրապետն իր պատգամն ու հայրապետական օրհնությունը բերեց ներկաներին, որտեղ մասնավորապես նշեց.

- Մեր սուրբ հայրերի փառաբանական աղոթքով գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ շնորհը պարգեւեց մեզ կատարելու Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Նվիրական արարողության այս պահին

*«Նվիրական արարողության այս պահին վերապրեցինք Սուրբ Գեւորգ եկեղեցու ութդարյա առաքելության հիշատակները, որ խոսուն վկայություններն են Վրաստանի օրհնյալ հողում հայության հոգեւոր ու ազգային կյանքի զարթոնքի` միաժամանակ խորհրդանշելով հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը»:*

վերապրեցինք Սուրբ Գեւորգ եկեղեցու ութդարյա առաքելության հիշատակները, որ խոսուն վկայություններն են Վրաստանի օրհնյալ հողում հայության հոգեւոր ու ազգային կյանքի զարթոնքի` միաժամանակ խորհրդանշելով հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Սուրբ Գեւորգ զորավարը Քրիստոսի մեծագույն վկաներից է, ում անունը անխզելիորեն կապված է նաեւ հայ ու վրացի եղբայր ժողովուրդների քրիստոնեական անցյալի հետ:

Սուրբ Գեւորգ զորավարի հանդեպ ակնածանքով ու հարգանքով է, որ հայ եւ վրաց ժողովուրդների զավակները Սուրբ Գեւորգին նվիրված հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ են ստեղծել եւ իրենց որդիներին անվանակոչել ու անվանակոչում են Գեւորգ անունով:

Զորավար Սուրբի հանդեպ սերն է նաեւ վրաց ժողովրդին մղել` նրան հռչակելու Վրաստանի հովանավոր Սուրբ:

Անդրադառնալով հայ ու վրաց ժողովուրդների բարեկամական սերտ կապերին, ինչպես նաեւ Վրաց հողում դարերի ընթացքում վեր հառնած հայկական սրբավայրերի պահպանմանը` Վեհափառը հավելեց. «Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման հոգենորոգ այս առիթով մենք հիշում ենք մեր մեծանուն նախնիներին` հոգեւոր կյանքի, արվեստի, մշակույթի, գիր-գրականության հայազգի մշակներին` Ներսես Աշտարակեցի Հայրապետին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային, Մակար Եկմալյանին, Հովհաննես Թումանյանին, Րաֆֆուն, Սուրացանին, Գաբրիել Սունդուկյանին, նշանավոր բազում հայ նվիրյալներին, ովքեր աղոթել ու



գործել են, ապրել ու ստեղծագործել են Վրաստանի հյուրընկալ հողում:

Վիրահայությունը Վրաստանը չի տարբերել պատմական իր հայրենիքից եւ գործել է ի սեր Վրաստանի բարօրության ու առաջընթացի, վրաց եղբայրական ժողովրդի հետ կրել է թե' զրկանքները եւ թե' տոնել հաջողությունները, իսկ, անհրաժեշտության դեպքում, լծվել վրաց սահմանների պաշտպանությանը թշնամիներից:

Այսպես է, որ հայության համար Վրաստանը հարազատ աշխարհ է, սիրելի երկիր` քրիստոնեական կյանքի օրհնակելի վկայություններով, ավանդական իր հյուրընկալությամբ, կյանքի ու կենցաղի գունագեղությամբ եւ ազգային յուրօրինակ արվեստով ու մշակույթով: Ուրախ ենք, որ այսօր եւս կենսունակ է վրացահայ համայնքը եւ նվիրված հոգեւոր իր կյանքի շինությանը` շարունակում է ջանքեր բերել Վրաստանի պայծառ ապագայի կերտմանը:

Մենք հավատում ենք, որ վերաօծված Սուրբ Գեւորգ եկեղեցին հոգեւոր կյանքի նոր շունչ պիտի հաղորդի մեր ժողովրդի զավակներին ու պիտի առավել ամրացնի հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայերն ու վրացիները` որպես քրիստոնյա հինավուրց ազգեր, անսասան հավատք ունեն հանդեպ Քրիստոսի եկեղեցու սրբազան ու փրկարար առաքելությունը:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը մեր հայացքներն ուղղում է նաեւ Վրաց օրհնյալ երկրում կառուցված մեր սրբավայրերին` վանքերին ու եկեղեցիներին, որոնք աստվածամերձության տարիներից մնացել են աղոթազուրկ ու անխնամ եւ երբեմն նաեւ այսօր ցավալիորեն փլուզվում են ու ավերակ դառնում հոգածության բացակայության պատճառով: Այսօրվա արարողությունը մեզ վստահություն է ներշնչում, որ, վրաց իշխանությունների աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի ու բարեպաշտ հավատացյալների ջանքերով, վերստին պիտի բարեկարգվեն ու պայծառանան նվիրական մեր աղոթավայրերը»,- ընդգծեց Գարեգին Երկրորդը:



Ապա Նորին Սրբությունը Սուրբ Գեւորգ եկեղեցու նորոգության գործում դրսեւորած սատարումի, ինչպես եւ` խորհրդային շրջանում եկեղեցու կրած ավերների հետեւանքների վերացման նպատակով Վիրահայոց թեմին ցուցաբերված աջակցության համար, շնորհակալություն հայտնեց վրաց իշխանություններին:

Ամենայն Հայոց Հայրապետը ողջունեց նաեւ Հայաստանի նախագահի Սերժ Սարգսյանի ներկայությունը սրբազան արարողությանը` մաղթելով նրան Բարձրյալն Աստծու զորակցությունը` իր բարձր առաքելության իրականացման մեջ:

Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքը հայտնեց եկեղեցու նվիրյալ զավակ, արարողության մասնակից Ռուբեն Վարդանյանին` «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի միջոցով Սուրբ Գեւորգ եկեղեցու նորոգության աստվածահաճո ձեռնարկն իրականացնելու համար: Գարեգին Բ Հայրապետն իր օրհնությունը բերեց նաեւ նախաձեռնությանը միացած բարերար անձանց` Ալբերտ Ավդոլյանին, Բիձինա Իվանաշվիլուն, Դանիել Խաչատուրովին, Սերգեյ Սարկիսովին, Կոնստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին ու Բորիս Նահապետյանին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին ու բարեջան հոգեւոր սպասավորներին վիրահայությանը բերած ջանադիր ու նախանձախնդիր ծառայության համար, ինչպես նաեւ թեմական վարչության անդամներին, կրթական ու ազգային հաստատությունների նվիրյալներին:

Հայրապետական օրհնության արժանացան նաեւ

*«Վիրահայությունը Վրաստանը չի տարբերել պատմական իր հայրենիքից եւ գործել է ի սեր Վրաստանի բարօրության ու առաջընթացի, վրաց եղբայրական ժողովրդի հետ կրել է թե' զրկանքները եւ թե' տոնել հաջողությունները, իսկ, անհրաժեշտության դեպքում, լծվել վրաց սահմանների պաշտպանությանը թշնամիներից»:*

Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման գործում ջանքեր ներդրած հայ ու վրացի ճարտարապետները, վարպետները, շինարարները եւ աշխատավորները:

Վերջում Ամենայն Հայոց կաթողիկոսը մաղթեց, որ Երկնավոր Տերն արդյունաշատ դարձնի Վիրահայոց թեմի առաքելությունը` ի նպաստ Վրաստանի հայության հոգեւոր կյանքի զորացման:

Գարեգին Բ Հայրապետն աղոթեց նաեւ, որ Բարձրյալն Աստված Սուրբ Գեւորգ զորավարի բարեխոսությամբ Իր օրհնության ներքո շեն ու պայծառ պահի վրաց երկիրը, բարօրության մեջ` վրաց եղբայրական ժողովրդին ու հանապազ օրհնի երկու երկրների եւ ժողովուրդների եղբայրությունն ու բարեկամությունը:

Այնուհետեւ, Վեհափառ Հայրապետը եւ Հայաստանի նախագահը եկեղեցու բակում ներկա գտնվեցին բարերարների ու նվիրատուների անվանական հուշատախտակի բացման արարողությանը:

# «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ` ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒՆ

(Սկիզբը` 1-ին էջում)

նիշվիլու «Քարթու խումբն» էր: Ավելացնենք, որ այդ խմբի ջանքերով, վերանորոգվել է շուրջ 650 մշակութային հուշարձան, ինչի համար ծախսվել էր շուրջ 34 միլիոն լարի:

Շնորհակալություն հայտնելով պարգեւի համար` Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց. «Հայկական եկեղեցու վերականգնումն ավարտվեց: Այն արտակարգ գեղեցիկ է: Դրան ես էլ մասնակցություն ունեցա եւ հպարտ եմ դրա համար: Դարեր շարունակ հարեւանությամբ ապրում ենք, եւ քիչ են եղել դիմակայությունները, վեճերը, որոնք տեղ են գտել մեր երկու ժողովուրդների հարաբերություններում: Հատկանշական ու խորհրդանշական է այն, որ մենք վիճարկում ենք, թե որ հուշարձանը որ մշակույթին է պատկանում: Պատմականորեն, պետությունների միջեւ բարեկամությունը բարդ գործընթաց է, իսկ մեզ մոտ, դարեր շարունակ եղբայրությունից ու բարեկամությունից բացի, ոչինչ չի եղել»:

# ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ` ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՆ

Վերաօծման արարողության ավարտին, եկեղեցում տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու պատվո բարձր շքանշանների եւ Հայրապետական օրհնության գրերի արժանացան Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգության գործում կարեւոր նպաստ ունեցած անձինք:

Ալբերտ Ավդոլյանին, Սերգեյ Սարկիսովին ու Բիձինա Իվանիշվիլուն շնորհվեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Կոնստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին ու Բորիս Նահապետյանին հանձնվեց «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան: Հայրապետական օրհնության գրեր տրվեցին Արթուր Ամիրխանյանին, Արամայիս Քամալովին, Իրինա Կոնդրատովային, Էլեոնորա Մալխասյանին, Արման Ձիլավյանին, Էդգար Մանուկյանին, Դավիթ Դավիթյանցին, Դավիթ Իակոբաշվիլուն եւ Արմինե Ղազարյանին: